ՌԱՄԱ մեթոդաբանություն

Ռեսուրսների արդյունավետ ու մաքուր արտադրությունը (ՌԱՄԱ) կանխարգելիչ բնապահպանական ռազմավարությունների համապարփակ և շարունակական կիրառումն է գործընթացների, ապրանքների ու ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու և մարդկանց ու շրջակա միջավայրի վրա ռիսկերը նվազեցնելու համար: ՌԱՄԱ նպատակն է արտադրել ավելի քիչ ռեսուրսներով և միաժամանակ նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ազդեցություններն ու բարձրացնել ընդհանուր արտադրողականությունը: Փոքր ու միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ) համար ՌԱՄԱ մեթոդաբանությունն արդյունավետ գործիք է ծախսերը նվազեցնելու, ինչպես նաև ՓՄՁ-ների մրցակցային առավելությունները բարելավելու ու էկոլոգիապես մաքուր գործելակերպ կիրառելու համար: Ինչպես նաև, ՌԱՄԱ-ն համարվում է ՓՄՁ-ների շրջանում շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրման և խթանման արդյունավետ գործիք:

«ԿԱՆԱՉ ԴԱՐ» ՋԵՐՄՈՑ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ - ՍՆՆԴԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության մասին

Գտնվելու վայր՝ Չարենցավան
Հիմնական ապրանքատեսակներ՝ միրգ ու բանջարեղեն՝ լոլիկ, պղպեղ, սմբուկ և ելակ
Աշխատակիցների քանակ՝ 3
Հիմնական շուկան՝ Հայաստան
Հիմնադրման տարեթիվ՝ 2021

Չարենցավանի «Կանաչ Դար» ջերմոցը մասնագիտացված է մրգերի և բանջարեղենի, մասնավորապես՝ լոլիկի, պղպեղի, սմբուկի և ելակի աճեցման մեջ: Հիմնադրվելով էկոլոգիապես մաքուր մթերքներ արտադրելու նպատակով՝ ջերմոցը գործում է շրջանաձև տնտեսության սկզբունքների կիրառմամբ: Ջերմոցում նաև աճեցվում են ձկներ, որոնց կենսաակտիվ թափոնները բույսերի համար ծառայում են որպես բնական պարարտանյութ:
Ավելի էներգաարդյունավետ արտադրություն ունենալու շարժառիթով ընկերությունը մասնակցել է «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» (2019-2024) ՌԱՄԱ ցուցադրական նախագծին: Այս հրապարակումը ցույց է տալիս ընկերության փորձը, որը զեկուցվել է 2022-2023 թվականներին անցկացված մոնիթորինգից հետո:

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1
5 ՌԱՄԱ տարբերակ (կենտրոնացված էներգիայի և ռեսուրսների արդյունավետության վրա)

2
Կարճ հետգնման ժամկետ (6 տարի բոլոր 5 ՌԱՄԱ միջոցառումների համար)

3
Տարեկան 10,582 եվրոյի հնարավոր տնտեսական խնայողություն

4
Տարեկան 238,8 տոննա CO_2-ի կրճատում

Նախագծի մոտեցումները

ՌԱՄԱ գնահատումն ուսումնասիրել է արտադրական տարածքը և բացահայտել ՌԱՄԱ տարբերակներ, որոնցից ընկերության կողմից առաջնահերթություն է տրվել հետևյալ հինգին (երեքն արդեն իրականացվել են):

ՌԱՄԱ տարբերակ 1: Աճեցվող բույսերի մակերեսի ընդլայնում պեռլիտի շերտի միջոցով: Ձկնաբուծարանում ծածանի թվաքանակի ավելացման հաշվին, սակայն սա կբարձրացնի ջերմոցի արդյունավետությունը:

ՌԱՄԱ տարբերակ 2: Ձկների քանակի ավելացում 60-ից 240-ի: Սա կբարձրացնի բույսերի արտադրողականությունը:

ՌԱՄԱ տարբերակ 3: Ամառային ամիսներին ռեհանի մշակում: Երբ դպրոցականները արձակուրդում են, միջոցառումը կարող է լրացուցիչ եկամուտ ապահովել ջերմոցի համար (երեք ամսվա ընթացքում վեց բերքի գնահատված եկամուտը 1,813 եվրո է):

ՌԱՄԱ տարբերակ 4: Ֆոտովոլտային (ՖՎ) արևային պանելների տեղադրում: Ընդհանուր առմամբ, 40 կՎտ հզորությամբ 50 պանելները կօգնեն նվազեցնել էլեկտրաէներգիայի սպառումը և բանջարեղեն աճեցնելու նոր հնարավորություններ կտան (տարեկան երեք բերք):

ՌԱՄԱ տարբերակ 5: Ջերմոցը պոլիէթիլենային թաղանթով ծածկում: Սա կնվազեցնի ցուրտ սեզոնի բացասական հետևանքները՝ ջերմոցը մեկուսացնելով պոլիէթիլենային թաղանթով, ստեղծելով օդային տարածություն ներքին և արտաքին շերտերի միջև: Այս մեկուսացված օդը գործում է որպես ջերմամեկուսիչ, ինչի շնորհիվ ջերմոցում պահպանվելու է ներքին ջերմաստիճանը:

ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ
Հիմնական ՌԱՄԱ գործողություններ

ՏԱՐԲԵՐԱԿ 1	Աճեցվող բույսերի մակերեսի ընդլայնում պեռլիտի շերտի միջոցով:
ՏԱՐԲԵՐԱԿ 2	Ֆոտովոլտային (ՖՎ) արևային պանելների տեղադրում:
ՏԱՐԲԵՐԱԿ 3	Ամառային ամիսներին ռեհանի մշակում:

Հիմնական տնտեսական ցուցանիշներ

ՌԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	Ներդրում (եվրո)	Խնայողություն (եվրո/տարի)	Հետգնման ժամկետ (տարի)
Ընդհանուր 5 տարբերակները:	23,620	10,582	6

Ռեսուրսների խնայողություն

ՌԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	Նյութեր (տ/տարի)	Էլ.էներգիա (Կվտժ/տարի)
Ընդհանուր 5 տարբերակները:	0	3,600

Աղտոտվածության ընդհանուր նվազում

ՌԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	Ընդ. CO_2(տ/տարի)
Ընդհանուր 5 տարբերակները:	238.8

Ընկերության պատկերացումները

Եթե առաջարկվող ՌԱՄԱ միջոցառումները հետևողականորեն իրականացվեն, կազմակերպությունը զգալիորեն կբարձրացնի արտադրանքի որակը, աշխատանքային առողջությունը և բնապահպանական ընդհանուր ցուցանիշները: Աշխատակիցներին ներկայացվել են էկոլոգիապես և տնտեսապես կայուն արտադրության հասնելու համար ՌԱՄԱ հիմնական մեթոդներն ու սկզբունքները, և առաջարկությունները հաշվի են առնվել: ՌԱՄԱ միջոցառումների իրականացման առավելությունները ներառում են արտադրական գործընթացների օպտիմալացում, ռեսուրսների վերամշակման և էներգիայի կրճատման համար նոր սարքավորումների մեջ ներդրում, վերականգնվող էներգիայի աղբյուրների առավելագույն օգտագործում, աշխատանքային պրակտիկայի բարելավում և կազմակերպության ածխածնային ոտնահետքի կրճատում:

ՌԱՄԱ-ի ներդրումը եղել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» գործողության մաս և իրականացվել է ՄԱԿԱԶԿ-ի կողմից: Այս համատեքստում **«Կանաչ Դար» ջերմոց Չարենցավանը** միացել է «ՌԱՄԱ» ցուցադրական նախագծին, որը մշտադիտարկվելու է «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» գործողության շրջանակներում: Հետագա այցելություններ են իրականացվել նաև՝ ստուգելու առաջարկվող ՌԱՄԱ տարբերակների իրականացումը: «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագիրն օգնում է Արևելյան գործընկերության գործընկեր վեց երկրներին պահպանել իրենց բնական կապիտալն ու բարձրացնել մարդկանց բնապահպանական բարեկեցությունը՝ աջակցելով շրջակա միջավայրին առնչվող գործողություններին, ցուցադրելով և բացելով ավելի կանաչ աճի հնարավորությունները և ստեղծելով շրջակա միջավայրի ռիսկերն ու ազդեցությունները ավելի լավ կառավարելու մեխանիզմներ: Լրացուցիչ մանրամասների համար այցելեք՝ **www.eu4environment.org**

Այս հրատարակությունը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Դրա բովանդակությունը բացառապես ՄԱԿԱԶԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

© – 2023 – ՄԱԿԱԶԿ: Բոլոր իրավունքները պաշտպանված են. Լիցենզավորված է Եվրամիությանը՝ համաձայն պայմանների:

ՄԱԿ-ի Արդյունաբերական Զարգացման Կազմակերպություն
տիկին Տատյանա Չերնյավսկայա
«ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի ղեկավար
Հեռ: +43 1 26 0 26 5520
Էլ. հասցե: t.chernyavskaya@unido.org

Կոնտակտներ:
Տարածաշրջանային բնապահպանական կենտրոն Կովկաս/Հայաստանի ազգային գրասենյակ
Հասցե: Այգեստան փ.7, շենք N 2, 0010, Երևան
Կայք: www.recp.am
Հեռ: +374-11 57-51-48